ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

13 փետրվարի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, ավագանու անդամ Սամվել Անանյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Արայիկ Քոչարյանը, Սերյոժա Սարդարյանը, Գրիգոր Կարապետյանը, Էմմա Գասպարյանը և Պավլիկ Պապինյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Արշակ Սրապյանը, Շուշանիկ Հակոբյանը և Արմենուհի Ոսկանյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Թիանա Բոջուկյանը և Սևակ Խաչատրյանը:

Նիստին նեկա էին ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ՝ Միեր Խեչումյանը, վարչական ղեկավարներ և աշխտկազմի պատասխանատուներ:

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 10 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սամվել Անանյանը ժամը 14.10-ին նիստը հայտարարեց բացված: Նա ողջունեց ներկաներին, շնորհավորեց ավագանու ութերորդ նստաշարջանի բացման կապակցությամբ, մաղթեց բեղմնավոր և համայնքի զարգացմանը նպաստող գործունեություն:

Նիստ վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի 3-րդ կետում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի

կառուցվածքը, համայնքապետարանի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» որոշման նախագծում կատարել լրացում՝ համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում ևս կատարել փոփոխություն, ավելացնել 3 հավաքարարի և 1 բակապահի հաստիք, հանել 1 անասնաբույժի հաստիք: 12-րդ կետում «Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին» որոշման նախագծում կատարել լրացում՝ նախագծի 3-րդ կետով վարձակալության ներկայացված 8 լոտ հողակտորներին ավելացնել ևս 1-ը: Ինչպես նաև օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 16-րդ հարց և որոշման նախագիծ հետևյալ բովանդակությամբ.

16. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

Քվեարկությամբ, կողմ՝ 10 ձայների համաձայնությամբ որոշման նախագիծն ընդգրկվեց օրակարգում:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծով:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 001-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.
Հաստատված օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի փետրվարի 13-ի թիվ 01 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Անանյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան և հաշվետու տարում համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունները հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

4. Փամբակ համայնքի ավագանու 06 ապրիլի 2022 թվականի թիվ 32-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին:

զեկ. Լ. Անդրիասյան

5. Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 14-ի N 129-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Փամբակ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին:

զեկ. Լ. Անդրիասյան

6. Փամբակ համայնքի սեփականության 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

7. Փամբակ համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Սեյրան Հովիկի Ղազարյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

9. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

10. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Սևակ Սամվելի Անանյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Սուսաննա Վիգենի Ոսկանյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

12. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

13. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

14. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

15. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Անանյան

16. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան և հաշվետու տարում համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը: Նա առաջարկեց դիտել 2024թ-ին իրականացված աշխատանքների վերաբերյալ պատրաստված տեսահոլովակը, որից հետո ներկայացրեց, որ

1. Փամբակ համայնքի 2024 թվականի բյուջեն կատարվել է.

ԵԿԱՆՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ՝

Փամբակ համայնքի 2024 թվականի բյուջեի ընդհանուր եկամուտները նախատեսված 827,751.200 դրամի դիմաց փաստացի կազմել են 769,538,500 դրամ, կամ կատարողականը կազմել է 93.0 %: Նախորդ՝ 2023թվականի համեմատությամբ եկամուտները ավել են կատարվել 54,782,800 դրամով՝ աճը կազմել է 107.7%:

Բյուջեի վարչական մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 705,306,000 դրամի դիմաց փաստացի կատարվել է 689,041,700 դրամ՝ ապահովելով 97.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի վարչական մասի եկամուտները ավել են կատարվել 107.160.100 դրամով՝ ապահովելով 118.4% աճ:

Ֆոնդային մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 275.231.300 դրամի դիմաց փաստացի կատարվել են 80,496,800 դրամ՝ ապահովելով 29.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի ֆոնդային մասի եկամուտները պակաս է կատարվել 116.471.800 դրամով՝ կամ կատարողականը կազմել է 29.8%:

2024 թվականի բյուջեի սեփական եկամուտները նախատեսվել են 145,452,000 դրամ: Փաստացի հավաքագրումը կազմել 160,420.000 դրամ, կատարողականը կազմելով 110.3 %: 2023թվականի համեմատությամբ եկամուտները ավել են գանձվել 11.913.000 դրամով՝ ապահովելով 108.2% աճ:

Ներկայացվում է Փամբակ համայնքի 2024 թվականի բյուջեի սեփական եկամուտների վերլուծությունը ըստ հարկատեսակների /եկամտատեսակների/

- Գույքահարկի ապառք համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների մասով - տարվա համար նախատեսված **2**00.000 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 557.400 դրամ, կատարողականը կազմելով 278.7%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 322.000 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 236.8 %-ով:
- Հողի հարկի ապառքի մասով - տարվա համար նախատեսված **2.000.000** դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 3.125.000 դրամ, կատարողականը կազմելով 156.3%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 693.000 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 81.8 %-ով:
- Անշարժ գույքի հարկի մասով - տարվա համար նախատեսված 28.810.200 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 28.301.100 դրամ, կատարողականը կազմելով 98.2%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 9647400 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 151.7 %-ով:

- Գույքահարկ փոխադրամիջոցների մասով - տարվա համար նախատեսված **59**.538.600 դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 57.801.300 դրամ, կատարողականը կազմելով 97.1%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 4.240.600 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 107.9 %-ով:
- Տեղական տուրքերի մասով - տարվա համար նախատեսված 4.907.000 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 9.218.000 դրամ, կատարողականը կազմել է 187.8%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 3.952.600 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 175.1 %-ով:
- Այլ եկամուտների մասով - տարվա համար նախատեսված **89.995.900**դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 75.417.200 դրամ, կատարողականը կազմելով 83.5%:

Որից՝

- Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարների մասով - տարվա համար նախատեսված 11.000.000 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 11.426.900 դրամ, կատարողականը կազմել է 103.9%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 208.000 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 98.2 %-ով:
- Այլ գույքի վարձակալության մասով - տարվա համար նախատեսված 1.450.000 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 1.719.800 դրամ, կատարողականը կազմել է 118.6 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվե 686.200 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 166.4%-ով:
- Տեղական վճարների մասով - տարվա համար նախատեսված 15.996.000 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 17.781.900 դրամ, կատարողականը կազմել է 111.2 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 2.337.100 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 115.1 %-ով:
- Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների մասով - տարվա համար նախատեսված 4.000.000 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 6.840.100 դրամ, կատարողականը կազմել է 171.0 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 2.446.900 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 155.7 %-ով:
- Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված ընթացիկ տրանսֆերտների (նվիրատվություններ) մասով - տարվա համար նախատեսված 40.000.000 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 14.000.000 դրամ, կատարողականը կազմել է 35.0 %: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է կատարվել 17.000.000 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 45.2 %-ով:
- Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված կապիտալ տրանսֆերտների (նվիրատվություններ արտաքին և ներքին աղբյուրներից) մասով - տարվա համար նախատեսված 8.212.800 դրամի նկատմամբ փաստացի մուտքեր չեն եղել:
- Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների մասով - տարվա համար նախատեսված **17**.549.000 դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 23.648.600 դրամ, կատարողականը կազմել է 134.8 %: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է կատարվել 10.917.700 դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 68.4 %-ով:

Պաշտոնական դրամաշնորհներ՝ դոտացիաներ.

Պաշտոնական դրամաշնորհների՝ դոտացիայի մասով – 2024թվականի համար նախատեսված **514.464.7**00 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 514.464.700 դրամ, կատարողականը կազմել է 100%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 112.785.700 դրամով, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 128.1 %-ով:

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաների մասով – տարվա համար նախատեսված 5.389.6 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 157.000 դրամ, կատարողականը կազմել է 29.1%:Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է կատարվել 438.7 դրամով, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել 26.4%-ով:

- Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) մասով – տարվա համար նախատեսված **114.232.400**դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 80.496.800 դրամ, կատարողականը կազմել է 70.5 %: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է կատարվել 43.840.100 դրամով, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 64.7 %-ով:

2024թվականի ընթացքում վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե փաստացի ծախս չի կատարվել, նախատեսված 152.786.200 դրամի դիմաց:

ԾԱԽՍԵՐԻ ԳԾՈՎ՝

Փամբակ համայնքի 2024 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացված ընդհանուր ծախսերը նախատեսված 870.008.0 դրամի դիմաց փաստացի կատարվել են 596,484.600 դրամով, կամ կատարողականը կազմել է 68.6%:Նախորդ՝ 2023 թվականի համեմատությամբ ծախսերը պակաս են կատարվել 166.243.400 դրամով՝ կատարողականը կազմել է 78.2%:

2. 2024թ տարեկան աշխատանքային պլանով /այսուհետ ՏԱՊ/ նախատեսված ծրագրերի կատարման ուղղությամբ 2024թ-ին իրականացվել են ներքոնշյալ աշխատանքները:

1) Դեբետ բնակավայրի խմելու ջրի ցանցի կառուցում

ՏԱՊ-ի առաջին ծրագիրն իրականացվում է սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում: Նախատեսվում է իրականացնել մոտ 4011 գծամետր երկարությամբ խմելու ջրի ցանցի կառուցում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **65.568.000** դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ 19.670.400 դրամ, պետական բյուջեից տրամադրվող մասնաբաժինը՝ 45.897.600 դրամ:

Քանի որ ծրագիրը հաստատվել է տարեվերջին, եղանակային պայմաններից ելնելով աշխատանքները 2024թ-ից տեղափոխվել են 2025 թվական: Շինարարական աշխատանքները մեկնարկի փուլում են:

2) Վահագնիի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում /փուլ 1/:

ՏԱՊ-ի երկրորդ ծրագիրն իրականացվում է սուբվենցիոն ծրագրերի շրջանակում: Նախատեսվում է Վահագնի գյուղում կառուցել եվրոպական չափանիշներին համապատասխանող մանկապարտեզ՝ երկու խմբի համար: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **134.249.517** դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 40.274.855 դրամ, պետական բյուջեից տրամադրվող մասնաբաժինը՝ 93.974.662 դրամ:

Ծրագրի ամբողջ փաստաթղթավորումն իրականացվել և նախագծի հետ ներկայացվել է << կառավարություն՝ հաստատման, սակայն դեռևս կառավարության կողմից այն չի հաստատվել:

3) Վահագնաձոր բնակավայրում մանկապարտեզի շենքի վերանորոգում:

ՏԱՊ-ի երրորդ ծրագիրն իրականացվում է սուբվենցիոն ծրագրերի շրջանակում: Նախատեսվում է Վահագնաձոր գյուղում գործող մանկապարտեզի շենքը վերանորոգել: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **30.074.400** դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 9.022.320 դրամ, պետական բյուջեից տրամադրվող մասնաբաժինը՝ 21.052.080 դրամ:

Ծրագրի ամբողջ փաստաթղթավորումն իրականացվել և նախագծի հետ ներկայացվել է << կառավարություն՝ հաստատման, սակայն դեռևս կառավարության կողմից այն չի հաստատվել:

4) Լեռնապատ բնակավայրի հանդիսությունների սրահի կառուցում:

ՏԱՊ-ի չորրորդ ծրագիրը նախատեսվում էր իրականացնել է սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում: Կազմվել է նախագծանախահաշվային փաստաթղթեր, սակայն կառավարության կողմից ծրագիրը չի հաստատվել: Նախատեսվում է այն իրականացվել 2025թ-ի սուբվենցիոն ծրագրով:

5) Ձորագյուղ բնակավայրերի գազաֆիկացում:

ՏԱՊ-ի հինգերորդ ծրագիրն իրականացվում է սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում: Նախատեսվում է երբեմնի գազաֆիկացում չունեցող Ձորագյուղում իրականացնել մոտ 5000 գծամետր երկարությամբ գազատարի կառուցում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **62.230.000** դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 28.003.500 դրամ, պետական բյուջեից տրամադրվող մասնաբաժինը՝ 34.226.500 դրամ:

Քանի որ ծրագիրը հաստատվել է տարեվերջին, եղանակային պայմաններից ելնելով աշխատանքները 2024թ-ից տեղափոխվել են 2025 թվական: Շինարարական աշխատանքները մեկնարկի փուլում են:

6) Եղեգնուտ բնակավայրերի գազաֆիկացում:

ՏԱՊ-ի վեցերորդ ծրագիրն իրականացվում է սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում: Նախատեսվում է Եղեգնուտ բնակավայրում իրականացնել մոտ 2000 գծամետր երկարությամբ գազատարի կառուցում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **32.809.980** դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 14.764.491 դրամ, պետական բյուջեից տրամադրվող մասնաբաժինը՝ 18.045.489 դրամ:

Քանի որ ծրագիրը հաստատվել է տարեվերջին, եղանակային պայմաններից ելնելով աշխատանքները 2024թ-ից տեղափոխվել են 2025 թվական: Շինարարական աշխատանքները մեկնարկի փուլում են:

7) Մարգահովիտ բնակավայրի փողոցի նորոգում ասֆալտապատման միջոցով:

ՏԱՊ-ի յոթերորդ ծրագիրն իրականացվում է սուբվենցիոն ծրագրերի շրջանակում: Նախատեսվում է Մարգահովիտ բնակավայրում իրականացնել մոտ 520 մետր երկարությամբ, 6 մետր լայնությամբ ճանապարհահատվածը ասֆալտապատում և նախատեսվում է կառուցել մոտ 509 գծմ ջրահեռացման համակարգ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **49.158.000** դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 27.036.900 դրամ, պետական բյուջեից տրամադրվող մասնաբաժինը՝ 22.121.100 դրամ:

Քանի որ ծրագիրը հաստատվել է տարեվերջին, աշխատանքների մի մասը իրականացվել է 2024թ-ին, մնացյալ մասը եղանակային պայմաններից ելնելով կմեկնարկի 2025 թվականին:

8) Ազնվաձոր բնակավայրի փողոցի նորոգում ասֆալտապատման միջոցով:

ՏԱՊ-ի ութերորդ ծրագիրն իրականացվում է սուբվենցիոն ծրագրերի շրջանակում: Նախատեսվում է Ազնվաձոր բնակավայրում իրականացնել մոտ 300 մետր երկարությամբ, 5 մետր լայնությամբ ճանապարհահատվածը ասֆալտապատում և նախատեսվում է կառուցել մոտ 129 գծմ ջրահեռացման համակարգ: : Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **28.564.000** դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 15.710.200 դրամ, պետական բյուջեից տրամադրվող մասնաբաժինը՝ 12.853.800 դրամ: Ծրագիրը հաստատվել է տարեվերջին, աշխատանքների մի մասը իրականացվել է 2024թ-ին, մնացյալ մասը եղանակային պայմաններից ելնելով կմեկնարկի 2025 թվականին:

9) Փամբակ բնակավայրի կենտրոնական փողոցների լուսավորության համակարգերի նորոգում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ:

ՏԱՊ-ի իններորդ ծրագիրը նույնպես իրականացվում է սուբվենցիոն ծրագրերի շրջանակում: Նախատեսվում է Փամբակ բնակավայրում իրականացնել մոտ 1000 գծամետր երկարությամբ լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **6.506.000** դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 2.927.700 դրամ, պետական բյուջեից տրամադրվող մասնաբաժինը՝ 3.578.300 դրամ:

Ծրագիրը հաստատվել է տարեվերջին, աշխատանքների մի մասը իրականացվել է 2024թ-ին, մնացյալ մասը եղանակային պայմաններից ելնելով կմեկնարկի 2025 թվականին:

10) Վահագնաձոր բնակավայրի կենտրոնական փողոցների լուսավորության համակարգերի նորոգում ՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ:

ՏԱՊ-ի տասերորդ ծրագիրը նույնպես իրականացվում է սուբվենցիոն ծրագրերի շրջանակում: Նախատեսվում է Վահագնաձոր բնակավայրում իրականացնել մոտ 500 գծամետր երկարությամբ լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **3.985.000** դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 1.793.250 դրամ, պետական բյուջեից տրամադրվող մասնաբաժինը՝ 2.191.750 դրամ:

Ծրագիրը հաստատվել է տարեվերջին, աշխատանքների մի մասը իրականացվել է 2024թ-ին, մնացյալ մասը եղանակային պայմաններից ելնելով կմեկնարկի 2025 թվականին:

11) Բազում բնակավայրի փողոցների լուսավորության համակարգերի կառուցում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ:

ՏԱՊ-ի տասնմեկերորդ ծրագիրը ևս իրականացվում է սուբվենցիոն ծրագրերի շրջանակում: Նախատեսվում է Բազում բնակավայրում իրականացնել մոտ 4500 գծամետր երկարությամբ լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **29.815.000** դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 13.416.750 դրամ, պետական բյուջեից տրամադրվող մասնաբաժինը՝ 16.398.250 դրամ:

Ծրագիրը հաստատվել է տարեվերջին, աշխատանքների մի մասը իրականացվել է 2024թ-ին, մնացած մասը եղանակային պայմաններից ելնելով կմեկնարկի 2025 թվականին:

2024թ-ին Փամբակ համայնքի 11 բնակավայրերում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի ընդհանուր արժեքը կազմել է **496.959.897** դրամ, որից համայնքի նրդրումը՝ **172.620.366** դրամ՝ կազմելով ընդհանուր սուբվենցիոն ծրագրերի 34,7 %-ը:

12) Փամբակի համայնքապետարանի շենքի տանիքին արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում:

ՏԱՊ-ով նախատեսված տասներկուերորդ ծրագրի կատարման ուղղությամբ Փամբակի համայնքապետարանի շենքի տանիքին տեղադրվել են 15 ԿՎՏ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայաններ: Ծրագիրն իրականացվել է «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը» կազմակերպության միջոցներով՝ համայնքի կողմից 20 տոկոս ներդրմամբ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 3 330 000 միլ ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը՝ 705 000 դրամ: Աշխատանքներն ավարտվել են:

13) Վահագնի բնակավայրում ոռոգման ջրամբարի կառուցում:

ՏԱՊ-ով նախատեսված տասներեքերորդ ծրագիրն իրականացնելու նպատակով կազմվել է նախագծանախահաշվային փաստաթղթեր 968.000 դրամ արժողությամբ, սակայն համապատասխան ֆինանսավորող կազմակերպություն չգտնելու պատճառով ծագիրը չի իրականացվել:

14) Մասնակցային բյուջետավորում ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական ծրագրի իրականացում:

ՏԱՊ-ով նախատեսված տասնչորսերորդ ծրագրով Փամբակ համայնքը կամավորական սկզբունքներով միացել է հանրապետությունում մեկնարկած մասնակցային բյուջետավորման գործընթացին: Ծրագրի շրջանակներում ավագնին թույլատրել է համայնքային բյուջեից 2.000.000 դրամ տրամադրել ՄԲ-ի գործընթացին: Արդյունքում 1.800.000 դրամի ձեռք է բերվել գութան և սանր գործիքներ:

15) «,Զարդանախշերի երկխոսություն» ծրագրի շրջանակներում Բազումի մշակույթի տան տանիքին արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում և գորգագործության սենյակի հիմնում:

ՏԱՊ-ով նախատեսված տասնհինգերորդ ծրագիրն իրականացվել է ՄԱԿ-ի և համայնքի համաֆինանսավորմամբ, ,,Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ,, ծրագրի շրջանակներում ստեղծված Փամբակ համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդներ խորհրդակցական մարմնի կողմից: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է **4.000.000** դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ 800.000 դրամ: Արդյունքում 2023թ-ի սուբվենցիոն ծրագրով վերանորոգված Բազում բնակավայրի ,,մշակույթի տան,, տանիքին տեղադրվել են 5 ԿՎՏ հզորությամբ արևային պանելներ, իսկ շինության սենյակներից մեկում հիմնվել է գորգագործության սենյան, որտեղ գորգագործության և կարպետագործության արվեստն են ուսուցանել թվով 20 արցախցի և տեղաբնակ կանայք և աղջիկներ:

Ներկայացվեց նաև որ 2024թ-ի բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն հաստատվում է «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված «ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի 2024թ-ի բյուջեի կատարման համապատասխանության աուդիտի վերաբերյալ» հաշվետվության հիման վրա:

Տարեկան հաշվետվությունը ներկայացնելուց հետո ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ՝ Միեր Խեչումյանը ողջունեց բոլորին և գոհունակություն հայտնեց 2024թ-ի ընթացքում Փամբակ համայնքում իրականացված աշխատանքների վերաբերյալ: Նա նշեց որ հաշվետու տարվա ընթացքում համայնքի ղեկավարը և աշխատակազմը պատվով են իրականացրել իրենց առջև դրված պարտականությունները և արել են ամեն ինչ՝ համայնքի բնակիչների կենսապայմանները և նրանց մատուցվող ծառայությունների որակը բարելավելու ուղղությամբ:

Հյուրերը և ավագանու անդամները 2024թ-ին Փամբակ համայնքում իրականացված աշխատանքները գնահատեցին դրական:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 002-Ա/:

2. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով կարիքները, անհրաժեշտություն է առաջացել.

1. Համայնքապետարանի աշխտակակազմի հաստիքացուցակում՝ համայնքային շենքերի պահպանման և մաքրության համար նախատեսել 3 հավաքարարի հաստիք, որոնք կտրվեն հավաքարարներ չունեցող վարչական կենտրոններին և 1 բակապահի հաստիք, որը կտրամադրվի Բազումի մշակութի շենքի պահպանման համար:
2. «Վահագնաձորի մսուր մանկապարտեզ», «Բազումի մանկապարտեզ» և «Լեռնապատի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների հաստիքացուցակներում ավելացվել է 0,5 դրույք դաստիարակի օգնականի հաստիք և պակասեցվել է 0,56 դրույք դաստիարակի հաստիք՝ իրենց ներքո գործող Անտառամուտի Ազնվաձորի և Արջուտի այլընտրանքային ուսումնական հաստատություններում համապատասխան փոփոխությունները կատարելու համար:
3. «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ում ավելացվել է 2 տրակտորիստի հաստիք:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 003-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու 06 ապրիլի 2022 թվականի թիվ 32-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Լիլիթ Անդրիասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ «Փամբակ համայնքի ավագանու 06 ապրիլի 2022 թվականի թիվ 32-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» որոշման նախագծի անհրաժեշտությունն առաջացել է 24 հոկտեմբերի 2024թ.«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի 1-ի հոդվածի համաձայն, համաձայն որի սոցիալական աջակցության վերաբերյալ համայնքի կամավոր խնդիրները լուծելու նպատակով համայնքի կողմից այսուհետ կարող են տրամադրվել «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սոցիալական ծառայությունները, բացառությամբ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված նպաստների կամ այլ դրամական օգնությունների տրամադրման: Ելնելով վերոգրյալից, առաջացել է անհրաժեշտություն նորովի սահմանել համայնքի կամավոր խնդիրները, մասնավորապես կատարել փոփոխություն սոցիալական աջակցության մասին կամավոր խնդիրների սահմանման և լուծման ընթացակարգում:

Սույն փոփոխությամբ նախատեսվող սոցիալական աջակցությունը իրենից ենթադրում է՝

1/ բնաիրային օգնություն՝ մասնավորապես սննդի և հիգիենայի փաթեթի ձեռքբերման քարտ՝ մինչև 20.000 դրամ արժողությամբ, որն իրենից ենթադրում է ցանկացած տեսակի սնունդ և հիգիենայի պարագաներ՝ բացառությամբ ալկոհոլային խմիչքների, ծխախոտի, սուր կտրող-ծակող գործիքների

2/ դեղորայքի ձեռքբերման քարտ՝ մինչ 30.000 դրամ արժողությամբ՝ բացառությամբ հղիության արհեստական ընդհատման և հոգեմետ դեղորայքի

3/ շինանյութի և/կամ կենցաղային պարագաների ձեռքբերման քարտ՝ մինչև 100.000 դրամ արժողությամբ

4/ հրատապ բժշկական միջամտության անհրաժեշտության դեպքում բուժման ծախսերի փոխհատուցում տվյալ բժշկական կազմակերպությանը մինչև 100.000 դրամի չափով

5/ տիրազուրկ կամ հոգեկան առողջության խնդիրներ կամ հատուկ խնամքի կարիք ունեցող կամ գտնվելու վայրը անհայտ ժառանգներ և/կամ ընտանիքի անդամներ ունեցող անձի մահվան դեպքում թաղման ծախսերի փոխհատուցում մինչև 100.000 դրամի չափով
6/ պետական բարձրագույն և/կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող համայնքի բնակիչ հանդիսացող սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձի փոխհատուցում մինչև 50%-ի չափով:

Կատարված փոփոխությունները հնարավորություն են ընձեռնում սոցիալական աջակցությունները դարձնել առավել կարիքահեն՝ բացառելով ռեսուրսների անուղղակի վատնումը՝ գործընթացը դարձնելով առավել վերահսկելի:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 004-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 14-ի N 129-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Փամբակ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Լիլիթ Անդրիասյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ «Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 14-ի N129-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Փամբակ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին» որոշման նախագծի անհրաժեշտությունն առաջացել է՝ ելնելով է 24 հոկտեմբերի 2024թ.
«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի 1-ի հոդվածից բխած «Փամբակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» 06 ապրիլի 2022 թվականի որոշման ուժը կործրած ճանաչվելու և նոր կարգը սահմանելու որոշման ընդունման հիմքով:

Չափորոշիչներով սահմանվում են սոցիալական աջակցության յուրաքանչյուր տեսակի դիմում ներկայացնելու համար նախատեսված փաստաթղթային ցանկը, դիմումների ուսումնասիրության ընթացակարգը: Սոցիալական աջակցության մասին բոլոր դիմումներն ուսումնասիրվում են համայնքի ղեկավարի կողմից սույն որոշման ընդունումից հետո ձևավորված մշտական Հանձնաժողովի կողմից, բացառությամբ Տիրազուրկ կամ հոգեկան առողջության խնդիրներ կամ հատուկ խնամքի կարիք ունեցող կամ գտնվելու վայրը անհայտ ժառանգներ և/կամ ընտանիքի անդամներ ունեցող անձի մահվան դեպքում թաղման ծախսերի փոխհատուցում իրականացնելու

նպատակով ֆինանսական աջակցություն հատկանելու պահանջի, ինչի դեպքում համայնքի ղեկավարի որոշում կայացվում է արագացված ընթացակարգով՝ առանց Հանձնաժողովի նիստի գումարման՝ վարչական ղեկավարի զեկուցագրի կամ սոցիալական աշխատողի հատուկ եզրակացության հիման վրա՝ կցելով չափորոշիչներով սահմանված փաստաթղթային փաթեթը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 005-Լ/:

5. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականության 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ ձևավորված հանձնաժողովի կողմից իրականացվել է գույքագրում, կազմվել է գույքի ցանկը: Փամբակ համայնքը ունի.
1. Ընդհանուր 3.346.823.978 ՀՀ դրամի գույք, որից՝
- Շենք – 604.408.211 ՀՀ դրամ
- Շշինություններ – 2.282.255.106 ՀՀ դրամ
- Սարքեր և սարքավորումներ – 40.547.590 ՀՀ դրամ
- Մեքենաներ – 262.894.400 ՀՀ դրամ
- Այլ հիմնական միջոցներ 56.325.716 ՀՀ դրամ
- Տնտեսական և արագամաշ գույք – 100.389.964 ՀՀ դրամ:

Գույքագրման ընթացքում պակասորդ կամ ավելցուկ չի հայտնաբերվել:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 006-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ ՏԿԵՆ-ի կողմից մշակված համամասնական ընթացակարգով ընտրված ավագանու օրինակելի կանոնակարգ, որը տրամադրվել է համայնքներին տեղայնացնելու համար:

Զեկուցողը ներկայացրեց, որ առանձին կետերով չի ներկայացնի առկա տարբերությունները, որովհետև կանոնակարգը ամբողջությամբ է փոփխված, հաստատված են նոր ձևաչափեր: Ընդգծեց միայն, որ ավելացվել է ավագանու անդամի բարեվարքության պահանջներին առնչվող դրույթներ: Կարգը հաստատելուց հետո հաջորդ նիստերը անց կկացվեն նոր ընթացակարգի համաձայն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 007-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Սեյրան Հովիկի Ղազարյանին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով հաշվի առնելով Սեյրան Հովիկի Ղազարյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ առաջարկում է տալ համաձայնություն նրա կողմից վարձակալած Փամբակ համայնքի Դեբեդ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-034-0031-0018 կադաստրային ծածկագրով 0,16239 հա համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 5-րդ կարգի խոտհարքը գնման նախապատվությամբ, ուղղակի վաճառքով Սեյրան Հովիկի Ղազարյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին է սահմանվում կադաստրային արժեքի չափով՝ 28020 (քսանութ հազար քսան) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 008-Ա/: Քվեարկության չմասնակցեց համայնքի ղեկավար՝ ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը, քանի որ դուրս էր եկել նիստերի դահլիճից:

8. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով հաշվի առնելով Հովհաննես Գևորգի Բազգևորգյանի և Լևոն Արամի Հովսեփյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ առաջարկում է տալ համաձայնություն նրանց բաժնային սեփականության իրավունքով պատկանող 06-034-0040-0013 կադաստրային ծածկագրով 0,1566 հա հողամասին կից գտնվող 06-034-0040-0014 կադաստրային ծածկագրով, 0,01344 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով Հովհաննես Գևորգի Բազգևորգյանին և Լևոն Արամի Հովսեփյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին է սահմանվում կադաստրային արժեքի չափով՝ 19080 (տասնինը հազար ութսուն) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 009-Ա/: Քվեարկության չմասնակցեց համայնքի ղեկավար՝ ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը, քանի որ դուրս էր եկել նիստերի դահլիճից:

9. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Սևակ Սամվելի Անանյանին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Սևակ Սամվելի Անանյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ առաջարկում է տալ համաձայնություն Սևակ Սամվելի Անանյանի կողմից վարձակալած Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0355-0052 կադաստրային ծածկագրով 1,49505 հա համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 5-րդ կարգի խոտհարքը գնման նախապատվությամբ, ուղղակի վաճառքով նրան օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 257 900 (երկու հարյուր հիսունյոթ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 010-Ա/: Քվեարկության չմասնակցեցին համայնքի ղեկավար՝ ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը, քանի որ դուրս էր եկել նիստերի դահլիճից և ավագանու անդամ Սամվել Անանյանը:

10. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Սուսաննա Վիգենի Ոսկանյանին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Սուսաննա Վիգենի Ոսկանյանի դիմումը՝ առաջարկում է տալ համաձայնություն նրա կողմից վարձակալած Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0247-0014 կադաստրային ծածկագրով 0,08003 հա համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքը գնման նախապատվությամբ, ուղղակի վաճառքով նրան օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 13806 (տասներեք հազար ութ հարյուր վեց) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 011-Ա/: Քվեարկության չմասնակցեց համայնքի ղեկավար՝ ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը, քանի որ դուրս էր եկել նիստերի դահլիճից:

11. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է տալ համաձայնություն 7 լոտ հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն, 9 լոտ հողամասը վարձակալության իրավունքով հատկացնելուն:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 012-Ա/:

12. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2024 թվականի նոյեմբերից մինչև 2025թվականի հունվար ամիսը Փամբակ համայնքի կողմից ձեռք է բերվել 5,596,000 ՀՀ դրամի հիմնական միջոց:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 013-Ա/:

13. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ներքոնշյալ տեխնիկան և գյուղատնտեսական գործիքները.

1) Բուլդուզեր /թրթուրավոր տրակտոր/ Т-170
2) Խոզանակ սարքավորում ИУЦЛ 32,00,000.
3) Գութան ПЛН-3-35П, ԱՏԳԱԱ 8432100000:

Վերը նշված գույքերի պահպանման և շահագործման ծախսերն իրականացնել «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի միջոցներով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 014-Ա/:

14. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ տարեսկզբի ազատ մնացորդը 31.12.2024թ-ի դրությամբ կազմում է.

1) վարչական բյուջեի մասով 187.892.181 դրամ 30 լումա
2) ֆոնդային բյուջեի մասով 7.766.321 դրամ 90 լումա
3) Սուբվենցիայի մնացորդ 19.652.226 դրամ 80 լումա

Անհրաժեշտ է նշված գումարները ներառել բյուջեում և ուղղել համայնքի 2024 և 2025թթ սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար՝ համապատասխան ծախսային հոդվածներ:

Առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է նաև 01.01.01՝ Կառավարման ապարատ նախահաշվով, տրանսպերտային նյութերից՝ 4264 հոդվածից պակասեցվել է 8.000.000 դրամ, կապված համայնքի ծառայողական մեքենաների շահագործումը դադարեցնելու հետ:

04.02.01՝ Գյուղատնտեսություն նախահաշվով, մասնագիտական ծառայություններով՝ 4241 հոդվածում ավելացվել է 7.920.000 դրամ, անասնաբույժների ծառայության դիմաց վարձատրության համար:

05.01.01՝ Աղբահանության նախահաշվով, ընթացիկ դրամաշնորհներով՝ 4637 հոդվածում ավելացվել է 3.600.000 դրամ, «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում ավելացված հաստիքների համար:

06.05.01՝ Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ նախահաշվով, ՄԱԿ-ի զարգացման հիմնադրամին տրամադրել համաֆինանսավորում ՝ 5511 հոդվածում ավելացվել է 10.000.000 դրամ, սուբվենցիոն ծրագրով մասնակի վերանորգված Ձորագետ բնակավայրի 1 փող. 80 շենքի շինարարական աշխատանքները ավարտին հասցնելու համար:

09.01.01՝ Նախադպրոցական կրթություն նախահաշվով, ընթացիկ դրամաշնորհներով՝ 4637 հոդվածում ավելացվել է 1.100.000 դրամ, «Բազումի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի համար գազի վառարանի և «Վահագնաձորի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի էլեկտրաէներգիային աբոնենտ դառնալու և հակահրդեհային անվտանգության համակարգի ձեռքբերման համար:

Եկամուտների գծով կատարվել է հետևյալ փոփոխությունները.

Անշարժ գույքի հարկը ավելացվել է 8 340.300 ՀՀ դրամ, կապված հարկի 25 % աճի հետ:

Փոխադրամիջոցի գույքահարկը ավելացվել է 1.222.900 ՀՀ դրամով՝ նոր հաշվառված տրանսպորտային միջոցների հաշվին:

Աղբահանության վճարները ավելացվել է 1.500.000 ՀՀ դրամ՝ բնակավայրերում աղբահանության նոր գործընթաց սկսելու համար:

Բյուջեի պահուստային ֆոնդում նախատեսվել է 26.782.329 ՀՀ դրամ,:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 015-Ն/: Քվեարկությանը չմասնակցեց ավագանու անդամ Սասուն Մարանդյանը, քանի որ դուրս էր եկել նիստերի դահլիճից:

15. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարն առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2025 թվականի մարտի 05-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝0 ընդունվեց որոշում ***/կցվում է որոշում N 016-Ա/:***

Ավագանու անդամ Սասուն Մարանդյանը չմասնակցեց քվեարկությանը, քանի որ դուրս էր եկել նիստերի դահլիճից;

Փամբակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2025 թվականի մարտի 05-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 14.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ _____

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ _____

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՒՐԱ _____

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ _____

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ _____

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ _____

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ Ա. ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՌԱՒՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ